

3301
3302
3303
3304
3305.

891.71
Q-58

25
22. III
~~18. IV~~
19. IV

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
ею.

ЧН

1664
Сталинград
Фрунзе

134

2011

2003

ЧН

891-714
4-58

ԽՈԽԱՆ ՆՈՐՍՎՈՅՆ ԳՐԱԴԱՐ

Տիգրան Ածուղիկ
Կոստանդնուպոլիս
Լեռնի Անդրէսի



ԱՆՁԳՈՒՅՈՒԹԻՒՆ

Թարգմ. Օլգա Գևորգի անի

3999



ԹԻԳՐԻՄ

Արտադատիպ «ՀԱՊԵՐԱՆԻ ԱԾՈՎ»
1911

945

ՎՐՈՅԱՆԿԱՌ

ԱՆՁԳՈՒՂՋՈՒԹԻՒՆ
ՀՀՕՆԻԴ ԱՆՂՐԵՒԿԻ

Երկու ժամ կար զեռ ևս մինչև գնացքի ճանապարհելը, երբ տէր հայրը եղաւ կայարանը:

Ճանապարհել էր նա տանից, երբ զեռ նոր էր արեգակը հորիզոնից բարձրացել և անցել էր նա կը եղաւ վերստ կանեփի, անտառի, և մարդկանտինների միջով, և բուրում էր նրանից վանեփի, ծաղիկների և ճանապարհի փոշով: Բայց կայարանում փշում էր քարեածուխի, իւղի և արևից տաքացած, երկասթի հոտ: Բանւորը, որից նոյնպէս բռուցում էր, ինչպէս և տէրհօրից քրտնօրի և կուալիքի հոտ, արագ ծուեց կառքը կողքի երկու անիւնների վրայ, ուզզեց նստելատեղը և քշեց, և տէր-հայրը մասց միայնակ իւր տոպրակով, հովանոցով և



բլիթներով։ Բողէապէս տէրհօրը տըն-
րութիւն պատեց և նա կանչեց թոյլ բա-
րակ ձայնով։

— Իվան! Ա՞յ, Իվան!

Բայց բանտորը հեռու էր և չէր լսում։
Տէրհօրը յանկարծ պատեց մի ինչ որ ու-
րախութիւն, և նրա համար, որ նա մե-
նակ էր մի այդպիսի անծանօթ և տարօ-
րինակ տեղում, և նրա համար, որ նա
գնում էր քաղաք, և պարզ անամպ երկն-
քից, որը երկաթէ կտուրի վրայով լայն
և հանգստացուցիչ կապուտին էր տալիս
նրա վրայ։ Նախ և առաջ նա պատկա-
ռանքով նստեց նստարանի վրայ, զգալով
հաճութիւն, որ նա գտնուումէ այն բարդ,
վերին աստիճանի հետաքրքիր ազդեցու-
թեան տակ, որ կոչւում է գնացք և եր-
կաթուղի։ Բայց որովհետեւ կայարանում
ոչ ոք չը կար, նա համարձակ և զգոյշ
սկսեց ամեն տեղ տնդղել։ Մտաւ սեղա-
նատունը, այնտեղ դրած էր երկար սե-
ղան, ծածկւած մարմարեայ մոմլաթով,
որի վրայով սողում էին ճանձերը։ Պատ-
կառանքով նայեց հեռագրատունը, այն-
տեղ ևս ոչ ոք չը կար, միայն հեռագրի

մեքենան էր ինչ որ թըխկ-թըխկացնում,
բաց թողնելով երկար, սպիտակ թղթի
ժապաւէնը։ Տէրհայրը թափահարեց գլու-
խը, և ասաց՝

— Խորիմաստութիւն!

Կանզնեց կասսայի առաջ, բայց որով-
հետեւ կասսան փակւած էր, և բացի ի-
րանից ոչ ոք չը կար, զնաց կայարանի
սրահը։

Հաւանեց նա և սրահը։ Նա երկար էր,
մաքուր, գործնական, տեղ-տեղ ածած էր
ասֆալտ, ինչպէս որ պաշշաճում էր այդ-
պիսի մեծ և լուրջ գործի համար։ Եւ
զանազան կողմեր սահում էին նրանից
լպրծուն բեկմերը, կարծես թէ պահպանե-
լով անթիւ, դղբդող զնացքների հետքե-
րը, և եթէ դէպի մի կողմը զնաս, կը
համես աշխարհի մի անիմանալի ծայ-
րին, եթէ միւս կողմը — նոյնպէս կը հահ-
նես այդպիսի մի անիմանալի առեղծւա-
ծայրին ծայրին։ Այդ միտքը այնպէս վըր-
գովեցրեց տէրհօրը, որ նա քիչ էր մը-
նում վագէվազ զնար կասսայի մօտ, բայց
գեռ կողպած էր և մարդ անգամ չը կար։

Դեռ վաղ էր։

— Զարմանալի է! զարմանալի է! — հանդիսաւոր, նոյն իսկ խիստ կերպով ասում էր տէր հայրը և աշխոյժ թափահարում գլուխը, որով և մազերից, և շորերից աննկատելի թափւում էր ճանապարհի նօսր փոշին: ✎ Երեկի թէ փոշուց էր, որ կակղել էր շորերի խշխոցը, նրա շարժւածքները անլսելի էին, միայն կօշիկները իրանց մեծ պայտառած կրունկներով թրիկացնում էին բարձր, անքաղաքավարութեան չափ բարձր:

Այդ պատճառով սրահից նա իջաւ ճանապարհի վրայ, փափուկ, խշխող աւազի վրայ, — և տեսաւ շոգեկառքը: Մեծ, սև, կեղտոտ շոգեկառքը: Կանգնած էր նա պահեստի ճանապարհի վրայ և, կարծես, քնած էր, — բայց որա մէջ կար բացարձակ կեղծութիւն: Իւր ամբողջ անշարժութեամբ և հանգստութեամբ նա երկում էր այդ տեղերի իսկական իշխողը մոռյլ, երկաթէ հրէշը, ծածկւած լի ուժով և անսահման անզուսպ ձգտումով:

Այդ նա է, եթէ ուզենայ կարող է թռչել աշխարհի այս, կամ այն կողմը: Այդ նա է, որ թըրիկ-թըրիկալով, զըրնդ-

զըրնդալով, սուլելով անցնում է գիշեր ու ցերեկ սայթկուն ըեւսերով, զոռում է, ցըռում է մարդկանց, ջարդում է անգգոյշներին, փառում է ամբողջ իւր ճանապարհին կանաչ և կարմիր կրակներ, — նա անշարժ և կեղտոտ երկաթէ գունս է, անհատկանալի հիւսւածք անիւների, խողովակների և լծակների:

— Զարմանալի է! — առաց տէրտէրը շեշտելով: Իսկապէս զարմանալի է:

Իսկ զիփավերում կապուտին էր տալիս լայն անծայր երկինքը և քաշում էր դէպի հեռուն:

II

Բայց, արդարե, նա քնած էր: Ոչ ծուխ, ոչ խշխոց — բոլորովին կարծես մեռած լինէր: Շոգեկառքի վրայ ոչ ոք չը կար, կարելի էր լիայոյս կերպով ձեռք մեկնել և զգուշութեամբ շոյել անիւր: Տէրհայրը արաւ այդ, բայց նախօրօք մատերն թըրով թացացրեց, կարծես վախճանալով, որ ձեռքերը կայրի: Կրկին անդամ թացարեց:

Յետ նայեց վախեցած — ճանապարհի

վրայով գալիս էր մի գեղջկուհի և նայում
էր նրա վրայ: Նա երեսը խօժում և իւ-
րան ձևացրեց, իբր թէ միքուքն է ուղ-
ղում, հանեց կապոյտ քառակուսի նախ-
շերով թաշկինակը և բաւականին երկար
ժամանակ սրբեց երեսը՝ թող գեղջկուհին
մտածի, որ նա քրտնած է: Ճիշտ որ
քրտնած էր, թաշկինակի վրայ քրտնքից
և փոշուց կեղտու շերտի հետքեր էր
մնացել: Խարւած զեղջկուհին զնաց, իսկ
տէրհայրը սաստիկ ցանկութիւն զգաց
մէկին աչքով անելու: Աչքով արաւ ու
ծիծաղեց՝ այ թէ տեսնէին ծխականները
—տէրտէր է, բայց ինչեր է անում:

Բայց և այստեղ տէրտէրը հասկացաւ,
որ այս բոլորը շատ լուրջ բաներ են և
ծիծաղելու ոչինչ չը կայ, բայց կարելի է
կասսան բաց է մտածեց նա: Ոչ, դեռ
ևս կողպած էր և մինչև զնացքի ճանա-
պարհելը մէկ և մի քառորդ ժամ կար:
Դահիճովն անցաւ պահապանը և նայեց
տէրհօր վրայ: Տէր—հայրը դլուխ տւաւ
նրան, նա ևս բարեց:

Քաղաքավարի ժողովուրդ են, գիտուն,
ոչ թէ մերոնց պէս,—հաւանութեամբ մը-

տածեց տէր հայրը և բոլորովին համար-
ձակ ու յամառ զնաց քնած շողեկառքի
մօտ: Եւ այժմս երեաց նա տէր հօրը ինչ
որ բարի և հանգիստ ձիու նման և ինչ-
պէս ձիուն գործից առաջ սովորաբար ա-
սում են, տէրհայրը ինամաբար ասաց.

—Դէ՞ն, դէ՞ն, հանգստացիր, հանգստա-
ցիր: Շուտով եղբայր, նորից պիտի
տանես:

Շողեկառքը մհծահոգի լուռմ էր: Եթէ
մօտենայ միս կողմից, այն ժամանակ
կայարանը չի երևալ: Տէր հայրը բունեց
շողեկառքի կուռը, բարձրացաւ, բայց
պոկւեց: Կարմրեց և գլուխը թափահա-
րեց բաւականին, թափ տալով փոշին և
քմծիծաղ տալով տարածութեան մէջ: Մտածեց
և զրեց աւագի վրայ հովանոցն
ու տոպրակը, կրկին վերցրեց, կրկին
զրեց և հաւաքելով փարաջան, զգոյշ
բարձրացաւ: Միայն երեք աստիճան էր,
բայց տէր հօրը երեսում էր, թէ այնքան
բարձր է, ինչպէս զանգակատունը:

—Զարմանալի է: Զար—մա—նալի է,
—ասաց տէր հայրը իմիստ և մտազբաղ
տոնով, ինչպիսի տոնով խօսում էր առ-

հասարակ խորհրդաւոր գիտութեան և նրա հրաշագործութիւնների մասին։ Եւ զգալով իրան արդէն քիչ, կարծես, գիտնական, անհոգ կերպով ինչ որ շոյեց ձեռքովը։ Բայց խսկապէս ոչինչ չէր հասկանում, միայն հաւատում էր՝ մեքենայի բազմաթիւ զանազան մասերը, մէկի գէպի միւսը անհասկանալի միաւորութիւնը, սլաքները, թւանշանները, լծակները — բոլորը խօսում էին մեծ զործողութեան մասին, բարդ և քննասէր մտքի, ինչ որ նշանաւոր և շատ բան խոստացող բանի մասին։

Եւ առանձին հաճոյք էր զգում, որ նա ինքը, մի խուլ անկիւնի տէրտէր, կարծես, համակից էր բոլոր այդ բաներին իւր համբերութեամբ դէպի գիտութիւնը։

— Այս, ահա այս — հունար է, Ահա այս մի բան արժէ։ Զարմանալի է ասաց տէրհայրը և խեթի հայեացքով ու արհամարհելով նայեց դէպի իւր տոպրակն ու հովանոցը։ Այժմ հովանոցն էլ նրան աննշան թւաց, իսկ երբ նրան գնել էր, նա նրա մասին գասախօսութիւններ էր խօսում։ Իհարկէ, ոչնչութիւն է այն բոլորի

դէմ, ինչ որ թափւած է այդտեղ։ Նա շարժեց մէկ կոանը — ոչինչ։ Շարժեց միւսը — յանկարծ ինչ որ բարձր թշշաց, և շոգեկառքը ինչ որ կասկածելի կերպով կենդանութիւն ստացաւ։ Մի ինչ որ տեղ թշշ-թշշում է։ Թափահարելով գլուխը, կոռացաւ — թշշ-թշշում է։ Տէրհայրը սպրունեց և սիրտը սկսեց բարախել՝ թըսկ — թըսկ յանկարծ կը գայ մեքենավարը, ինչ ասել այն ժամանակ նրան։ Զգուշութեամբ ինչ որ բան հուպ տւեց և խսկապէս թշշոց կտրեց, բայց շարժւեց՝ մէկ-մէկ, մէկ-մէկ։ Այս աւելի վատ եղաւ։ Անյոյս կերպով նայեց հովանոցի վրայ և քաշեց կոթը, — ինչ որ բան դէպի յետ մզեց նրան, յետոյ դէպի առաջ, վերջապէս երկու լայն բաց ոտքերի վրայ ուղիղ կանգնեցրեց։ Հազիւ ուրախացել էր տէրհայրը, որ ազատել է, նայեց, — բայց շուրջը բոլորը լողում էր։ Միւսը լողում է, պահապանի տնակը լողում է, յետ նայեց, այստեղ էլ յետ էին լողում հովանոցն ու տոպրակը։

— Գնում եմ։

III

Դղբդում է, թըրիկ-թըրիկում է, քաշ-քըռում է, ծանր-մշշացնում է և թաւալ-ում—իսկական գաղան լինի կարծես: Եւ ոչ մի տեղին դպչել չէ կարելի, ամէն ինչ խճճվել է: Ինչ որ բան շուռ տւառ տէրհայրը, շոգեկառքը կատւի նման ցատկեց առաջ և վագեց առաջ այնպէս արագ, որ սաստիկ քամու հոսանքից ականջներումը վշշոց սկսեց: Կրկին ինչ որ շուռ տւառ, թէ քաշեց և զլլսավերել լսվեց վայրենի, ինչ որ սարսափելի շշմիցնող սուլոց, թէ վույոց: Գոնէ առաջ գնում էր հանգիստ, իսկ այժմ վույոցը ամբողջ աշխարհքով մէկ լցրեց:

—Տէր—Աստուած...—յառեց տէրհայրը: Բայց այդպէսի պատահմունքների համար աղօթք չը կար.—Տէր— Աստուած.. Տէր—Աստուած... իսկ յետոյ լինչ:

Գլուխը գուրս հանեց— քամին պոկեց զլլսարկը և փոշոտ մաղերը խառնվեցին զլլի վրայ, թափւեցին բերանը, խփում էին աչքերին. Սիրտը վաղուց գաղարել էր խփելուց և թէ ինչպէս նա գեռ կենդանի

էր—տէրհայրը ինքն էլ չէր իմանում: Երբ որ մազերի քըրքոցից աղատւեց—ոչ զլիսարկ, ոչինչ չը կար: Կար մի ինչ որ անտառ: Դժւած՝ անտառ, որը անզուսպ յետ էր մզւում, ուղիղ անդունդը:

Տէր-Աստուած! — կամուրջ Դր... Ժ... Ահա և կամուրջը չը կայ, ոչինչ չը կայ: Եւ հողը կարծես խորն է լնկել, բայց տէր հայրը և շոգեկառքը թուչում էին դէպի վեր ու վեր—Տէր—Աստուած: Ահա մանչը նախիրի մօտ է— մանչ, — մանչ: Ահա պահապանի տնակը, պահապանը կարմիր գրոշակը ձհոքին թափահարում է, և նրա երեսը սարսափից սպրտնել է—պահապան— պահապան: Եւ գարձեալ ոչինչ, իսկ հողը վերսիցն է և թփերն զլլիի վրայից են անցնում:

Բոլորովին պարզ է, որ այդ դիտմամբ է, որ այդ չի կարող լինել—թէ չէ՝ հապա ինչ է—ըլիթները: Հովանոց և ըլիթներ: Բայց սրտեղ են նրանք:

—Իմ ըլիթները, ըլիթները— վնթփեննթում էր տէրհայրը և արտասուքից երեսը ծուժում էր:

Այն բաղդաւորութիւն էր, այն արքա-

յութիւն էր, այն անսահման, անհաւատալի երանութիւն էր, երբ նա նրանց իւր կոնատակն ունէր: Ինչո՞ւ նա ամեն տեղ պրպտեց, ինչո՞ւ շարժեց, ինչո՞ւ բարձրացաւ: Մի անգամ պուկ եկաւ — ինչ բաղդաւորութիւն էր—պուկ եկաւ:

—Յիմար, անիրաւ, սրտով հայհոյում էր տէրտէրը ինքն իրան միենոյն ժամանակ աւելացնում էր՝ զար — մա նալի է:

Դղրդում է, թըրիկ-թըրիկում է, Սլաք-ները ինչպէս գերաններ էին ցցւած դիմացը: Բոնւած երկաթով տանում է ինչ որ տեղ, սլանում է: Ահա կրկին երևաց, պլպլաց կարմիր զրօշակը, ինչպէս ալաւի լեզու, — նշանակում է վտանգաւոր է, սարսափելի է դիմացը, սարսափելի է: Վերջ:

Եւ տէրհայը այլ ևս չի տեսնում, չի լսում, չի հասկանում: Անիւների թըրիկ-թըրիկոցը, զընդ-զընդոցը, մօտից թռչող ծառերը, հրհրողը, թուլացած մարմնի ճոճելը, զլխի մէջ դեռ ևս անցնող հատուկտոր մտքերը — բոլորը միախառնվում են մի անդուսպ, ահարկու, կատաղի

զգացմունքի թափչքի: Բոլորը նրա մէջ դատարկում է, մեռնում է, կարծես թէ քամին է զուրս մղում: Արդեօք զնում է նա ինքն իրեն, թէ շոգեկառքն է տանում — նա չը գիտէ:

Բայց սա արդէն շոգեկառք չէ: Շոգեկառք նա էր, նա մնաց կայարանում, բայց սա — նրանք են, խուզ, անհնապանդ, և ինչ որ ներքին տեղից գուրս են հըրտում իրանց սարսափելի մերկութեամբը: Նրանց վրայ չեն ազգում ոչ ազօթքները, ոչ անէծքները: Նա անխուսափելիօրէն կատարում է, տալով աշխարհին այն սարսափելի և տարօրինակ տեսքը, որպիսին երևում է աշխարհս նրանից հեռացողների հայեացքում:

Մէկ ակնթարթում, մի առանձին սաստիկ զարկումից տէր հայրը ուշքի է գալիս և կանչում է մի տարօրինակ անհամապատասխան ձայնով, ինչպէս կանչում են կառապանին:

— Կանգնիր:

Եւ հայհոյում է նոյնպիսի տարօրինակ խօսքելով:

— Դէս կանգնիր, յիմար: Յիմար: Անասուն, անասուն:

Եւ կրկին արձանանում է, տարւած ահարկու և կատաղի մտքի թոփչքով: Եւ կանգնում է, ճօճելով, շւարած, ջարդւած, նրա գլուխը ուժասպառ դէս-դէն է ընկնում, և գունատւած երեսի վրայի փոշոտ խորշերը — գունատ երեսի վրայ — մթնում են անմիտ, հեզ և խղճալի կերպով՝ կնձիռներ հաճելի ծիծաղի, խաղաղ զուարճութեան, ընտանեկան վշտի հիւանդացած կովի համար.

Դատարկ է, մեռած է և մինչև անդամ, կարծես թէ հանգիստ է — թըխկ-թըխկոցը և զընդ-զընդոցը տանող հոսանքի մէջ: Եւ, ինչպէս հեռաւոր ափի մօտ փարոսի խաղաղ կրակը, երբ առաջին միայն ու ալիքներ և փոթորիկն է, — հաղիւ պլազում է վերջին հեքի մէջ հեռու, քաղցր բլիթների մտածմունքի մէջ:



1724
41

3301

3302

3303

3304

3305

2013

